

# Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1921 հունվար 10 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ անտառների ազգայնացման մասին:  
 հունվար 11 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ Հայաստանի բոլոր օգտակար հանածոները, հանքային ջրերը, լճերը ազգայնացնելու մասին:  
 հունվար 21 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության խորհուրդ՝ ժողտնտխորհ կազմակերպելու մասին:  
 հունվար 22 Ծնվեց հայ կոմպոզիտոր, դաշնակահար Առնո Բաբաջանյանը: (Վախճ. 1983թ.-ին):  
 հունվար 23 Տեղի է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի հանդիսավոր բացումը, որը 1923թ. վերանվանվեց Պետական համալսարան:  
 փետրվար 5 ՀԽՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ Էջմիածնի մատենադարանի և թանգարանի բազայի վրա Հայաստանի կուլտուր-պատմական գիտական ինստիտուտ հիմնելու մասին:  
 փետրվար 9 Երևանում ձերբակալվեց Նիկոլ Աղբալյանը:  
 փետրվար 12 Սկսվում է Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ Լոռու նախկին «չեզոք գոտու» աշխատավորության ապստամբությունը, որը փետրվարի 16-ին ավարտվում է լիակատար հաղթանակով:  
 փետրվար 13 Դաշնակցականների հակահեղափոխական խռովության սկիզբը:  
 փետրվար 18 Տեղի ունեցավ հակաբոլշևիկյան ապստամբություն Հայաստանում:  
 փետրվար 25 Խորհրդային կարգերի հաստատումը Վրաստանում:  
 փետրվար 26 Դաշնակցականների հակահեղափոխական խռովության դեմ կռվելու նպատակով Դիլիջանում ստեղծվում է Դիլիջանի և Ղարաքիլիսայի շրջանների ռազմա-հեղափոխական կոմիտե Գ. Աթաբեկյանի նախագահությամբ:  
 մարտ 15 Սողոմոն Թեհլիրյանը տապալեց Թալաթ Պաշային, հայկական ցեղասպանության հիմնական ոճրագործին:  
 մարտ 16 Խորհրդա-թուրքական պայմանագրի կնքումը Մոսկվայում:  
 մարտ 16 Անգլիան և Թուրքիան փոխանակեցին պատերազմի բանտարկյալներին և որոշ թուրք բռնակալների, որոնք պատասխանատու էին հայկական կոտորածի համար: Օսմանյան թուրքերը, որոնք պահվում էին Մալթայում, ազատ արձակվեցին:  
 ապրիլ 2 Երևանի ազատագրումը դաշնակցական խռովարարներից:  
 ապրիլ 3 ՀԽՍՀ Հեղկոմի հրամանը «Հայրենիքի փրկության կոմիտեի» տապալման, նրա անդամների ձերբակալման և ամբողջ հանրապետության մեջ խորհրդային իշխանությունը վերականգնելու մասին:  
 ապրիլ 14 Վ. Ի. Լենինի պատմական նամակը Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների հանրապետության կոմունիստներին:

ապրիլ 22 Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական զավթիչներից:  
 ապրիլ 26 Դաշնակցականները վերակազմում են «Ինքնավար Սյունիքի կառավարությունը» և անվանում «Լեռնահայաստանի կառավարություն»:  
 ապրիլ 28 Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը 1,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ է բաց թողնում Խորհրդային Հայաստանին:  
 մայիս 12 Ծնվեց ժամանակակից կոմպոզիտոր Էդուարդ Սիրոզյանը:  
 մայիս 21 ՀԽՍՀ Հեղկոմը վերակազմվում է ՀԽՍՀ ժողովմխորհրդի Ա. Մյանսիկյանի նախագահությամբ:  
 հունիս 5 Ստալինի միջամտության շնորհիվ ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի ապօրինի որոշմամբ Լեռնային Ղարաբաղն անջատվեց Հայաստանից և բռնակցվեց Ադրբեջանին:  
 հունիս 13 Ստեղծվում են առաջին սովխոզները Հայաստանում:  
 հունիս 26 Կարմիր բանակի զորամասերը լիովին ազատագրելով Դարալագյազը, մտնում են Ձանգեզուր:  
 հունիս 30 Կարմիր բանակի զորամասերը ազատագրում են Սիսիանը:  
 հուլիս 2 Կարմիր բանակի զորամասերը ազատագրում են Գորիսը:  
 հուլիս 7 Կարմիր բանակի զորամասերը ազատագրում են Ղափանը:  
 հուլիս 19 Կարմիր բանակի զորամասերը մտնում են Մեղրի: Ձանգեզուրը միացվում է Խորհրդային Հայաստանին:  
 օգոստոս 21 Երևանում բացվում է Հայաստանի կոմերիտմիության առաջին համագումարը:  
 օգոստոս 22 Հայաստանի արհեստական միությունների առաջին համագումարի բացումը Երևանում:  
 սեպտեմբեր 21 ՀԽՍՀ ժողովմխորհն ընդունում է դեկրետ Հայաստանում անգրագիտությունը վերացնելու մասին:  
 սեպտեմբեր 27 Մարսելում վախճանվեց գրական, հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Փորթուգալյանը: (Ծնվ. 1848թ.-ին):  
 սեպտեմբեր 29 ՌՍՖՍՀ Կենտգործկոմը դեկրետ է ընդունում նախկին Լազարյան ճեմարանը «Խորհրդային Հայաստանի կուլտուրայի տուն վերանվանելու և նրա բոլոր նյութական ու կուլտուրական արժեքները Խորհրդային Հայաստանի կառավարության տրամադրության տակ դնելու մասին»:  
 սեպտեմբեր 30 ՌՍՖՍՀ-ի և Խորհրդային Հայաստանի միջև կնքվում է ֆինանսա-տնտեսական համաձայնագիր:  
 հոկտեմբեր 13 Մի կողմից Հայաստանի, Սորբեջանի ու Վրաստանի, իսկ մյուս կողմից Թուրքիայի միջև կնքվում է Կարսի պայմանագիրը:  
 դեկտեմբեր 1 Հայաստանում սկսվում են գյուղական, գավառակային և գավառային խորհուրդների առաջին ընտրությունները:  
 դեկտեմբեր 13 Սկսվում է արտասահմանից հայերի հայրենադարձությունը Խորհրդային Հայաստան:



## ՔՎԵԲԵԿՈՒՄ ԿՏԵՂԱԴՐԿԻ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԶՈՅԵՐԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԵՎԻՐՎԱԾ ՅՈՒՇԱՐՁԱՆ

Կանդահայերի կոնգրեսից Կազգեն Բոյաջյանի ուղարկած հաղորդագրությունից տեղեկացանք, որ Կանադայի Քվեբեկ նահանգի կառավարության անդամները հավանություն են տվել Քվեբեկ քաղաքում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակն հավերժացնող հուշարձան տեղադրելու կոնգրեսի առաջարկին: Հուշարձանի կենտրոնում կտեղադրվի 12-րդ դարի բարձրարժեք հայկական խաչքար, որը 1980 թվականին ցուցադրվելուց հետո վստահվել էր Մոնրեալի Հայկական բարեգործական ընդհանուր միության Ալեք Մանուկյան դպրոցին: Կոնգրեսը որոշել է խաչքարը նվիրել Քվեբեկին՝ ի նշան հայ ժողովրդի երախտագիտության 2003 թվականին Հայոց ցեղասպանությունը Քվեբեկի խորհրդարանում ճանաչելու համար:

Կանադահայ մեկ այլ կազմակերպություն ցանկություն է հայտնել Քվեբեկ քաղաքին նվիրել Կոմիտասի կիսանդրին՝ որպես հայերի եւ քվեբեկցիների բարեկամության խորհրդանիշ: Կառավարության անդամների եւ քաղաքական գործիչների հետ վերջին հանդիպման ժամանակ կանադահայերի կոնգրեսը համաձայնել է Կոմիտասի կիսանդրին ու հայկական խաչքարը նույն տեղում տեղադրելու կանադական կողմի առաջարկին: Հայկական երկու կազմակերպությունները որոշել են իրենց համար չափազանց կարելոր այդ նախագծի վրա միասին աշխատել եւ դրան մասնակից դարձնել նաեւ Քվեբեկում ապրող բոլոր հայերին: Հուշարձանի բացումը նախատեսվում է 2007 թվականի ապրիլին:

### ԱՄԵՐԻԿԱՅԱՅ ՄԱՍՈՒԼ

## «ԹԱՅՄԸ» ՓՈՐՁՈՒՄ Է ՈՒՂԵԼ ԻՐ ՍԽԱԼԸ

«Թայմ» ամերիկյան պարբերականն ճշմարտությանը մոտենալու մի առաջընթաց քայլ կատարեց: Հունիսի 6-ի համարում պարբերականի եվրոպական համարներում 4 ամբողջական էջ էր հատկացված Թուրքիայում զբոսաշրջության զարգացմանը: Գովազդի համար վճարողն Անկարայի առևտրի պալատն էր, որը նաեւ 70 րոպեանոց DVD էր ներառել, որտեղ աղավաղված էր ներկայացված Հայոց ցեղասպանության փաստը: DVD-ն ձրի բաժանվել էր պարբերականի կես միլիոն եվրոպացի բաժանորդներին:

«Թայմի» խմբագիրներն անփույթ վերաբերմունքի հետեւանքով չէին գիտակցել, թե ինչ սխալ են թույլ տալիս եւ դրանով մեղսակից դառնում թուրքական ժխտողական քաղաքականությանը: Երբ Շվեյցարիայում գործող հայկական ասոցիացիան այդ առթիվ սպառնաց դատի տալ «Թայմին» շվեյցարական օրենքները խախտելու մեղադրանքով, պարբերականի գործադիր տնօրեն Ջեյմս Քելին խոստովանեց, որ ոչ ոք «պատշաճ կերպով չէր ստուգել» թուրքական DVD-ի բովանդակությունը, եւ ներողություն խնդրեց հայերից՝ նշելով, որ դա «չէր համապատասխանում արդարության եւ ճշգրտության» պարբերականի սկզբունքներին:

Հայկական ասոցիացիան լրիվ բավարարված չէր այս պատասխանով: Նրան միացան նաեւ հինգ ֆրանսիական կազմակերպություններ, որոնք իրավաբան վարձելով հետամուտ եղան պաշտպանելու իրենց իրավունքները: Ֆրանսիայում հայկական կազմակերպությունները համակարգող «Մենուար-2000» խորհուրդը, Ազգային (Հայ դատի) կոմիտեն, «ժաքյուզ» ու «Ռասիզմի դեմ եւ հանուն ժողովուրդների բարեկամության» կազմակերպությունները երկար բողոքի մամակ հղեցին պարբերականին, որն ամբողջությամբ մեկ էջի վրա տպագրվեց «Թայմի» եվրոպական տարբերակի հոկտեմբերի 17-ի համարում: Սակայն հայկական կազմակերպությունների բուն պահանջը դեռ չի կատարված, եւ նրանք չեն կարող բավարարված լինել: Ինչպես սրանից առաջ նշել ենք, նույնքան կազմակերպություններ պարբերականից պահանջում են, որ մի նոր DVD պատրաստվի Հայոց ցեղասպանության ճշմարտացի փաստերով եւ ձրի տրամադրվի բաժանորդներին, իսկ թուրքական DVD-ից եւ գովազդից ստացած եկամուտները տրամադրվեն հայկական ոչ շահութաբեր կազմակերպություններին:

Ընդունելով իր սխալը եւ ամբողջովին էջի վրա տպագրելով նամակը, «Թայմը» կատարել է պատասխանատվության զգացումի համապատասխան առաջին դրական քայլերը, սակայն դրանք պետք է հետեւեն նաեւ մյուս երկու քայլերով. «Թայմի» նման հեղինակավոր պարբերականին վայել չէ եկամուտներ ստանալ ժխտողական եւ ռեւիզիոնիստական գաղափարախոսների արատավոր հիմնադրամներից:

## ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ «ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՂԱՅՈՑ» ԳԻՐՔԸ

Երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցին նվիրված «Վազգեն Ա կաթողիկոս ամենայն հայոց» գիրքը լույս է ընծայվել Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հրատարակությամբ:

Մայր աթոռ Սբ. Էջմիածնի տեղեկատվական համակարգից ստացված հաղորդագրության համաձայն, գիրքը համապարփակ տեղեկություններ է տալիս կաթողիկոսի կյանքի եւ գործունեության մասին, ինչպես նաեւ գրքում զետեղված են հոգելույս հայրապետի անդրանիկ կոնդակը, տարբեր առիթներով ասված քարոզներ, Նորին սրբության կյանքի զանազան դրվագների մասին հոգեւորականների ու մտավորականների հուշեր: Գրքում ընդգրկված են նաեւ Վազգեն վեհափառի մահվան տարելիցի առիթով Գարեգին ամենայն հայոց կաթողիկոսի կոնդակը եւ նախագահ Ռոբերտ Քոչարյանի ուղերձը՝ նվիրված անցյալ տարի Վազգեն Ա կաթողիկոսի մահվան 10-րդ տարելիցի հուշ-երեկոյի մասնակիցներին:

հասարակայնության հետ կապերի վարչությունից, կառավարական հանձնաժողովի որոշմամբ, Հրանտ Ոսկանյանի հոգեհանգիստը տեղի ունեցավ հոկտեմբերի 20-ի ժամը 18:00-ից՝ Սայաթ-Նովա փողոց, թիվ 29 շենք, 12 հասցեում, հուղարկավորությունը՝ հոկտեմբերի 21-ի ժամը 14:00-ին՝ նույն հասցեից:

## «ԵՐԵՎԱՆ, ԵՐԵՎԱՆ, ԻՄ ՄԻԱԿ ՕԹԵՎԱՆ...»



«Թափառող մայրաքաղաքների երկիր», այսպես են բնութագրել Հայաստանը օտարերկրյա ճանապարհորդներն ու հետազոտողները: Արեւելք-Արեւմուտքի նվաճողների հալածանքներից դրդված հայերն իրենց մայրաքաղաքը տեղափոխել են տեղից տեղ եւ ունեցել են 12 մայրաքաղաք. Տուշպա (Վան), Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Երազգավորս (Շիրակավան), Կարս, Անի, Երեւան:

## ՄԱՅԱՑԵԼ Է ՀՐԱՆՏ ՈՍԿԱՆՅԱՆԸ



**ԵՐԵՎԱՆ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ:** ՀՀ վարչապետ Անդրանիկ Սարգսյանի որոշմամբ, ճանաչված պետական եւ քաղաքական գործիչ Հրանտ Ոսկանյանի մահվան կապակցությամբ ստեղծվեց հուղարկավորման կառավարական հանձնաժողով՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի գլխավորությամբ:

Ինչպես հայտնեցին ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության եւ

### Ակնարկ Երեւանի պատմությանը

Երեւանի տեղում բնակավայր էր տակավին մեզանից 6000 տարի առաջ. այն հիմնադրվելով 8-րդ դարում (մ. թ. ա.) մինչեւ 7-րդ դարը (մ. թ) կեսերը բերդաքաղաք էր եւ վարչական կենտրոն :

...10-11-րդ դարերում Երեւանում տիրապետում էր Ապիրատ իշխանը: Հիշատակությունների համաձայն նա ուներ 12000 հեծյալ եւ նրանց ուժերով հանել է Երեւանի ջրանցքը, հավանաբար Մամուրի, կառուցել է տվել Կեչառիսի վանքը: Մոնղոլները Հայաստանը գրավեցին 1235-36 թթ. եւ 1242-43 թթ. արշավանքների ընթացքում երկրով մեկ իշխում էին ավարառությունը, կողոպուտը, սպանությունն ու զանգվածային գերեվարությունը: Այնուհետեւ գլուխ է բարձրացնում Սիջին Ասիայի բռնակալը՝ Լենկ-Թեմուրը: Դեպի

Հայաստան Լենկ-Թեմուրը արշավել է չորս անգամ. 1386, 1387, 1394, 1400 թվերին: Նրա արշավանքների ժամանակ հիմնովին ավերվել է Երեւանը, սպանվել 500 մարդ: 1405 թ. նրա մահից հետո նրա նվաճած երկրները զատվեցին, Հայաստանը մեկ դար տեւող այդ պայքարի ընթացքում ընկավ նախ կարա-կոյունլու, ապա ակ-կոյունլու թուրքմենական ցեղերի տիրապետության տակ: Կարա-կոյունլու Ջհանշահը ստեղծեց Արարատյան կուսակալություն, որի կենտրոնը Երեւանն էր. նա հայ իշխանական տների հետ հաշվի էր նստում, նրանց զանազան արտոնություններ էր տալիս՝ իր իշխանությունը հարատեւ դարձնելու նպատակով: Այս շրջանում սովորական էին դարձել թալանչիական կռիվները, դավադրությունները, թուրքմենական խաների վայրենի կամայականությունները:

Գյուղատնտեսության մեջ իշխողը այգեգործությունն էր, իսկ հատիկային կուլտուրաների մեջ աչքի էր ընկնում բրինձը: Շատ երեւանցիներ կանովին լքում էին հայրենի քաղաքը, քանի որ խաները թուրքմեն արտոնյալ ցեղերին բերում-լցնում էին Երեւան:

Չնայած անտանելի պայմաններին, ժողովրդի առաջավոր ներկայացուցիչները հիշատակության արժանի գործերով զարգացնում են մեր մշակույթը: Միայն 15-րդ դարում Երեւանում ընդօրինակվել է մեզ հասած 5 ձեռագիր, որոնց վերջում գրիչները թողել են ժամանակը բնորոշող հիշատակարաններ: Մի շարք երեւանցի գրիչներ շարունակում են ստեղծագործել այլեւայլ քաղաքներում ու շենքերում: Երեւանի այս շրջանի պատմության հետ է կապված Թովմա Մեծոփեցի պատմագրի գործունեությունը: Նա 1410 թվականին Երեւանում ընդօրինակել է Գրիգոր Տաթևացու քարոզչիքը: Թովմա Մեծոփեցին Երեւանում էր գտնվում 1441 թ., երբ կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվում էր Վաղարշապատ:

1500 թվականից սկսած Երեւանը փոխմիփոխ նվաճել են Պարսկաստանն ու սուլթանական Թուրքիան. ավելի քան 300 տարի, մինչեւ 1828 թվականը:

Երեւանը 15-րդ դարից սկսյալ դարձել է Արեւելյան Հայաստանի կենտրոնական մասի՝ նախ Երեւանի կուսակալության կամ խանության, այնուհետեւ Երեւանի նահանգի կենտրոնը, 1918-1920 թ. Հայաստանի, իսկ 1920 թվականից՝ Սովետական Հայաստանի մայրաքաղաքը:

### ***Քաղաքի բնակչիմայական պայմանները, աշխարհագրությունը***

Երեւանը իշխող դիրք ունի Արարատյան դաշտում, հիմնադրման օրից եղել է բանուկ ճանապարհների

վրա, քաղաքակրթված երկրի կենտրոնական մասում: Քաղաքը օղակող բլուրները՝ Կոնդի, Քանաքեռի, Նորքի ամֆիթատրոնի տեսք են տվել նրան, Հրազդան գետը եւ նրա հյուսիս-արեւելքից հոսող վտակ Գետառը խմելու եւ ոռոգման ջրերի անսպառ աղբյուր են եղել բնակիչների համար: Հին Երեւանի տարածքի 99 տոկոսը այգիների ու բանջարանոցների ծածկույթ է եղել: Երեւանը Կասպից ծովի ափերից դեպի Փոքր Ասիայի սիրտը տանող ճամփաների վրա գտնվելով՝ մի աչքով նայել է բիբլիական լեռանը՝ Արարատին, մյուսով՝ Արագածին: Բուն հին քաղաքի տեղը երկրաբանական ժամանակներում ծածկված է եղել ջրով. հարուստ է ամեն տեսակ նստվածքներով, որը, սակայն, կատաղի Գետառը հեղեղներով քչել, տարել է՝ տեղը հաճախ լցնելով քարերով: Կիսաանապատային գոտում է գտնվում քաղաքը, սակայն դարերով մշակվելով ու ծածկվելով արհեստական ոռոգման ցանցերով, վեր է ածվել ծաղկուն մի տարածքի, որից մարդիկ տարեկան կարող էին ստանալ երեք բերք: Հյուսիսից հարավ ունեցած թեքության պատճառով քաղաքի բոլոր մասերից երեւում են մեծ ու փոքր Մասիսները: Քաղաքը, աստիճանաբար իջնելով, ձուլվում է Արարատյան դաշտին: Ցամաքային կլիմա ունի. ամառները շոգ են: Եթե չլինի «Լուսավորչի քամին», որ փչում է Գեղամա լեռներից, մասամբ Արայի լեռից ու Արագածից, ընդ որում անուշաբույր քամի, մարդ շնչահեղձ կլինի: Ձմեռները ցուրտ են, կարճատեւ գարուն ունի, երկար ու մեղմ աշուն: Ձմեռը վրա է հասնում դեկտեմբերի կեսին եւ տեւում է մինչեւ փետրվարի կեսերը: Գետառից ու Ջանգվից բացի, ջրի մյուս աղբյուրները եղել են Երկաթաղբյուրը (Դամիրբուլաղ), Խորունաղբյուրը, քաղաքի հարավային մասում տարածվում է Թոխմախ լիճը, որի կառուցումը ավանդաբար կապվում է Թոխմախ անունով խանի հետ: Սակայն ամենայն հավանականությամբ նա լիճն ընդամենը վերանորոգել է, այն շատ ավելի հին է, գոյություն է ունեցել դեռեւս ուրարտացիների ժամանակներից: Լիճը սովորաբար լցվում է գարնանը, Մամռիի ջրերով, իսկ ամռանը վեր է ածվում սովորական ճահճուտի՝ շուրջը տարածելով հիվանդություններ: Դամիրբուլաղ թաղի ջրերի ավելցուկներն ու բաղնիքների կեղտաջրերը հավաքվում էին բերդի եւ թաղամասի միջեւ ու գարշահոտ ճահիճը իր սեւ գործն էր տեսնում բնակչության մեջ: Վատ հողերի վրա տարածված էին փշաբույսերն ու օշինդրը: Մշակված, խաս հողերի վրա աճում էին ամեն տեսակ պտղատու ծառեր: Ոռոգման առումների երկայնքով աճում են ուռնիներ: Արարատյան դաշտի համար շատ բնորոշ է Նաիրյան բարդին. ջրի գոլորշիացումը մեղմելու նպատակով ջրանցքների երկարությամբ հայերը տնկել են

բարդիներ, որոնց խիտ շարքերը դաշտերը քամիներից պահպանելու, շոգը մեղմելու, ճանապարհները եզրապատելու նպատակ են ունեցել:

Տուֆի հինգ քարհանք ունի Երեւանը: Նրա համար բնորոշը կղմինդրի գույնի կարմիրն է: Բոլոր քարհանքերում տարածված է սեւ եւ կարմիր տուֆը: Մեկ-մեկ պատահում է նաեւ գորշ գույնի տուֆ, որը ավելի դիմացկուն է: Իբրեւ շինանյութ լայն տարածում ունի բազալտը, որը շատ հեշտ է արդյունահանվում, անջրաթափանց է եւ թեթեւ: Բազալտներ կան Կոնդում, Աբովյան փողոցի հյուսիսային մասում, ծակոտկեն բազալտներ կան Թոխմախի շրջակայքում: Երեւանը հարուստ է կավահողերով, որոնք նախկինում շատ են օգտագործվել շինարարության մեջ: Նորքի թաղամասը հնում այդպես էլ կոչվել է Չոլմաքչի (կավագործ): Մեծ խորությունների վրա աղ կա, ավազ, գիպս:

Երեւանի գրաված շրջանը երկրաբանական նորագույն ժամանակներում ծածկված է եղել ջրով, որն աստիճանաբար չորանալով, թողել է կավի, գիպսի եւ նստվածքային այլ նյութերի բավական հաստ շերտ: Գտնվել է կիսաանապատային գոտում, սակայն հնուց ի վեր մարդն այս տարածքը ծածկել է ջրանցքների ու ոռոգման առուների խիտ ցանցով, փոխել է նրա բնակլիմայական պայմանները, եւ Երեւանն իր շրջակայքով մտել է ավանդական «երկրային դրախտի» մեջ: Հին քաղաքը հարուստ է եղել ոռոգման ջրով՝ Հրազդանը, նրա վտակ Գետառը, ստորգետնյա ջրերն ու աղբյուրները, հարուստ է եղել այգիներով, հայտնի են հրաշալի ծիրանը, դեղձը, խաղողը, տանձը:

Պատմական աղետներից բացի քաղաքը շատ է տուժել նաեւ բնական աղետներից՝ երկրաշարժից, սելավից, կարկտահարությունից, մորեխից, մահասփյուռ հիվանդություններից, սովից: 19-րդ դարի երկրորդ տասնամյակի վերջերից՝ 1828 թ. մինչեւ 1865 թվականը 7 անգամ տարածվել է խոլերա: 1829-30 թթ. մարդկային մեծ զոհեր է պատճառել, մահացել է քաղաքի բնակչության 10 տոկոսը:

Մեծ չարիքներ են պատճառել քաղաքին Գետառի հեղեղները՝ 1860 թ., 1873 թ. օգոստոսի 14-ի սելավը, 1946 թ. հեղեղը մարդկային զոհեր տարան:

Երկրաշարժեր. 1679 թվի երկրաշարժը, որ հայտնի է «Երեւանի երկրաշարժ» անունով, գետնի երեսից ջնջել, տարել է քաղաքի հնությունների մեծամասնությունը, գրեթե հողին է հավասարեցրել քաղաքը: Հունիսի 4-ին տեղի ունեցած այս երկրաշարժը փոքր ընդմիջումներով շարունակվել է մինչեւ սեպտեմբերի 8-ը: Ուրեմն՝ հունիսի 4, հունիսի 12, սեպտեմբերի 8: Նկարագրություններից կարելի է ենթադրել, որ ցնցումները հասել են 8-9 բալի: Երկրաշարժը ընդգրկել է Գեղարդից մինչեւ Աշտարակի

շրջան. սկանատես քանաքեռցի Ջաքարիա Սարկավազը ողբալով պատմում է, որ քանդվեցին ու ավերվեցին Աղջոց վանքը, Այրիվանքը, Հավուց-Թառի վանքը, Գառնիի հեթանոսական տաճարը, Խորվիրապի վանքը, Ջրվեժի եկեղեցին, Չազավանքը, Երեւանի երեք եկեղեցիները, Նորագավթի, Նորագեղի, Չորագեղի, Նորքի, Գյամրեգի եկեղեցիները, Երեւանի բերդը, մզկիթներն ու միմարեները, հիմնովին քարուքանդ եղավ Քանաքեռը, փլվածքներ եղան Կարբի գյուղաքաղաքում, Հովհաննավանքում, Վաղարշապատում եւ այլուր: Շատ զոհեր են եղել:

Երկրաշարժից, մահասփյուռ հիվանդություններից, սելավից բացի Երեւանը շատ է տուժել նաեւ մորեխից. մորեխների սոսկալի արշավանքները ամայացրել են արտերն ու այգիները, սով է տիրել աշխարհում: Այդ արշավանքներից հատկապես հայտնի են երկուսը. մեկը 1692, մյուսը՝ 1913 թվականներին: Առաջինի ժամանակ մեծ վնաս չի եղել, իսկ երկրորդի ժամանակ այնքան մեծ է եղել աղետը, որ սովամահ են եղել մարդիկ: Մորեխը գալիս էր Պարսկաստանից:

### **Հին Երեւանի բնակիչներից**

...Մելիք Սահակը կատարյալ իշխանավոր էր, մեծ կալվածքների տեր, շրջապատված բազմաթիվ ծառաներով. նա հատուկ արտոնություններ ուներ պարսից կառավարությունից եւ ամբողջ խանության ամենաազդեցիկ մարդկանցից մեկն էր համարվում: Հաքստիաուզենի ասելով. «Երբ որ երեւում էր նա, երեւելի պարսիկի շորերով (որ բոլոր հայերի մեջ միայն նա կարող էր հագնել) երկայն թեւավոր ծիրանի վերարկուով... նստած Դաղստանի գեղեցիկ ծիու վրա՝ շրջապատված իր ծառաներով, այն ժամանակ ամենայն հայ ընդունում էր նրան որպես յուր իշխանին...: Ինքը՝ շահը, ճանաչում էր նրան, ինչպես յուր հավատարմագույն հպատակներից մեկը, այս պատճառով նրա ազդեցությունը մեծ էր ամենայն տեղ. Երեւանում այս կողմանե միայն Սարդարն էր նրանից վեր»: («Կռունկ հայոց աշխարհին» անսագիր, Թփիսիս, 1862, էջ 26):

Մելիք Սահակին թիուլական իրավունքով պատկանում էին էլար գյուղի մի մասը, Արգաքյանդ (Արգական), Դալլար, Գյումեշ գյուղերը: Նա ապրում էր Կոնդում եւ այնտեղ ուներ շքեղ ապարանք (Մելիք-Աղամալյանների մասին է խոսքը):

Նույնպիսի իրավունք ուներ նաեւ Գեղամյան ընտանիքը, վերջին շառավիղը Բարսեղ Գեղամյանն էր: Նա Բջնի մեծ գյուղի տերն էր: Երեւանի հայ բնակչությունը ենթարկվում էր այդ երկու մելիքների, իհարկե, մեծագույն մասի տերն ու տիրակալը Աղամալյաններն էին: Մելիքներն ավելի մեծ

իրավունքներ են ունեցել, շրջակայքի հայ գյուղերը նրանց հարկատու են եղել: Երեւանի խանության բնակչության դատական գործերով էլ են զբաղվել՝ բավական մեծ իրավունքներով, բացի մահապատժից: Հետագայում սարդարները սահմանափակել են նրանց իրավունքները, բայց եւ այնպես նրանք իբրեւ ժառանգական ազնվականներ, մեծ արտոնություններ ունեին. ազատված էին բոլոր տեսակի պետական հարկերից, նրանք միջնորդ էին պետության ու հայերի միջեւ: Նրանք հսկում էին հարկերի ժամանակին հավաքմանն ու ներքին կարգ ու կանոնին: Տեր-Գրիգորյան եղբայրները՝ Գրիգոր քահանան, Գաբրիելը եւ Միքայելը Ղուկաս եւ Հարություն հորեղբայրների համաձայնությամբ, վաճառելով իրենց ժառանգություն մնացած տները՝ այդ միջոցներով եւ իրենց անմիջական հսկողությամբ 1793 թվականին Գետառից ազուգաներով ջուր են բերել տալիս Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու գավիթը, որտեղից օգտվել է հավանաբար կոնդեցիների մեծ մասը: Երվանդ Շահազիզը վկայում է, որ այդ ջրմուղի հետքերը մշմարվում էին եկեղեցու արեւելյան պատի մոտ: Տեր-Գրիգորյան եղբայրները այդ ջուրը բերել էին ոչ թե անմիջապես Գետառի ակունքից՝ Քառասուն աղբյուրից, որ այն ժամանակվա պայմաններում զրեթե անհնարին էր, այլ քաղաքի մոտի, բայց մաքուր ջուր ունեցող հատվածից: Դրա կառուցման մանրամասնությունները նկարագրված են եղել մի փաստաթղթում, որը կոչվում էր «Արծանագիր» եւ ամբողջությամբ տեղ է գտել Երվանդ Շահազիզի «Հին Երեւանը» աշխատության մեջ: «Արծանագիր» տեքստից պարզ երեւում է, որ Տեր-Գրիգորյանների արածը մեծ բարեգործություն էր կոնդեցիների համար՝ նրանք ապահովվել էին նախկինի համեմատությամբ մաքուր, լավորակ, առողջարար ջրով:

### **Տները**

1829-32 թվականների տվյալներով Երեւանն ունեցել է 1736 տուն, որից 792-ը Շահար քաղամասում, 622-ը՝ Թափաբաշում, 322-ը՝ Դամիրբուլաղ թաղում: Տները կառուցել են հում աղյուսից, մանր քարերից, կավից, իբրեւ շաղախ օգտագործել են կավի կամ կրի ցեխը առանց ճարտարապետի կամ վարպետի: Ի. Շոպենը հետեւյալ կերպ է նկարագրում Երեւանի տները. «ճակատը միշտ նայում է բակի կողմը, դեպի փողոց ցուցադրված էր առանց լուսամուտների եւ դռների՝ խուլ, այլանդակ պատը. պաշտոնական խաները եւ աստիճանավորները իրենց տները զարդարում էին դեպի փողոց նայող դարպասով, սակայն քաղաքացիները ձգտում էին, որպեսզի իրենց

բնակարանները բոլորովին աննկատ լինեն, եւ մուտքի համար թողնում էին մեղ ու ցածր դռնակ, որի դիմաց կառուցում էին փոքր պատ, որպեսզի անցորդները չկարողանային տեսնել ներսը»:

Այդ նախագուշությունը նախկինում (պարսկական տիրապետության շրջանում) անհրաժեշտ էր երկու կարելու պատճառով. եթե պարսկական իշխանավորներից որեւէ մեկը նկատում էր, որ քաղաքային այս կամ այն բնակիչը մյուսներից ավելի հարուստ է ապրում, որ նրա տունն ավելի մաքուր է, կանայք ավելի շքեղ են հագնված, մի խոսքով, որ նա օգտվում է որոշ բարեկեցությունից, ապա, հասարակական հարկադրման ժամանակ միշտ ձգտում էր ավելացնել նրանից պահանջվող հարկի մասը: «Եթե սարդարը, խանը կամ որեւէ աստիճանավոր քաղաքային բնակիչ տանը նկատում էր գեղեցիկ կին, ապա բոլոր միջոցներով ձգտում էր կամավոր կամ հարկադրաբար նրան խլել իր հորից կամ ամուսնուց, իսկ դիմադրության դեպքում վրեժ էր լուծում»:

### **Տարածված արհեստները**

Ամենատարածված արհեստներից է եղել բրուտագործությունը՝ հատկապես Նորքում որը թեպետ առանձին գյուղ էր, բայց համարվում էր քաղաքի թաղերից մեկը, տնտեսական բոլոր թելերով կապված էր քաղաքին: Նրանց պատրաստած խեցեղենն ու զինեգործության համար անհրաժեշտ ամանները ընտիր ու լավորակ էին, եւ Երեւանի խանության Յուվայի բրուտները զիջում էին նրանց իրենց վարպետությամբ: Կոնդում ապրում էր Էջմիածնի հավատարմատար Ռեւազ անունով մի արհեստավոր, որը լինելով փայլուն պղնձագործ եւ արծաթագործ, միաժամանակ տիրապետում էր մի քանի արհեստների: Հնուտ էին քարտաշները, որմնադիրները, մաշիկագործներն ու գդակագործները, զինագործներն ու դրամահատները, մանածագործներն ու ջուլիակները: Ամեն արհեստավոր միաժամանակ տիրապետում էր մի քանի արհեստների: Ի. Շոպենն այն կարծիքն է հայտնել, որ «արհեստներն այստեղ, դեռեւս կիսավայրենի երկրում, ամեն քայլափոխում հիշեցնում են այն ժամանակները, երբ մարդը հենց նոր էր թողել... իր անտառներն ու քարանձավները»:

Սակայն դա ճիշտ կարող էր լինել միայն գործիքների վերաբերյալ. արհեստավորը ծայրից ծայր անում էր իր գործը բարեխղճությամբ: Նույն Շոպենը բարձր կարծիք է հայտնել ատաղձագործների մասին. «Այստեղի բոլոր արհեստավորների մեջ առանձնապես ուշագրավ է ատաղձագործը. նրա ոտքերը վարժված

են նրան, թե ինչպես գետնին նստած ոտքերով պահում է՝ ձեռքերով պատրաստվող իրը, կարելի է նրան անվանել քառաձեռ մարդ»:

Ասիական մեծ պատուհաններ պատրաստելու վարպետությունը հռչակավոր էր: Այդ պատուհանները սարքվում էին այլազան նուրբ ձողիկներից եւ ունեին մանր եզրանախշեր, իրենց մեջ պահում էին գույնզգույն ապակիներ, որոնք նման էին գեղադիտակների: Հայտնի էին ոսկերիչներն ու արծաթագործները, որոնք տիրապետում էին այդ գործի տեխնոլոգիական բոլոր բարդություններին: Ս. Եղիազարովը պնդում է, որ Երեւանի նահանգի զինագործները 19-րդ դարում այնքան էին կատարելագործել իրենց արհեստը, որ «այնպիսի ոչ մեծ գավառական քաղաքում, ինչպիսին Նախիջեւանն էր, զինագործները պատրաստում էին նորագույն համակարգի զենքեր...»:

### **Երեւանի խմելու ջուրը եւ ջրմուղը**

Խմելու համար գործածել են Ջանգվի, Կըրխբուլաղի, Սյոգյուտլուի, Դամիրբուլաղի եւ ջրհորների ջրերը: Դրանք ունեցել են օրգանական նյութեր, որի պատճառով շատ են եղել մահացությունները, հիվանդությունները, անգամ խոլերա ու ժանտախտ: Բնական աճը աննշան է եղել, մահացության տոկոսը շատ բարձր: Շատերը պատճառը համարել են բնակլիմայական վատ պայմանները, բայց իրականում սոցիալական վատ պայմաններն են ու խմելաջրի անլուծելի հիմնահարցը: Այդ ջրերը բոլորն էլ նստվածք են տվել ու առաջացրել ստամոքսի անբուժելի հիվանդություններ: Լավագույն միջոցը Քառասուն աղբյուրի մաքուր ջրերը քաղաք բերելն էր եւ նման երկու հաջող փորձ արվել է :

17-րդ դարի կեսերին Երեւանցի Արզումբեկի որդի Մոծակ մականունով խոջա Գրիգորին հաջողվում է 1652 թ. «Մեկ քյահրեզով կազմակերպել Քառասուն աղբյուրի Կըրխ-բուլաղի մաքուր, չաղտոտված մասից ջուր բերել, հասցնել Կաթողիկե եկեղեցու բակը, իսկ այստեղից էլ հանվել, տարվել է քաղաքի կենտրոն: Երկրորդ փորձը կատարվել է 18-րդ դարի 90-ական թվականներին, Երեւանցի Տեր-Գրիգորյան եղբայրների միջոցներով եւ անձնական նախաձեռնությամբ, որի մասին ակնարկվեց արդեն»:

Մոտ քսան տարի է տեւում ջրմուղի պատմությունը. փայտերերը տասներկու հոգի էին, Տիգրան Աֆրիկյանը, Առաքել Աֆրիկյանը, Կարապետ Աֆրիկյանը, Ալեքսանդր Ազիզյանը, Գաբրիել Աբրահամյանը, Գեւորգ Ամիրյանը, Բարսեղ Եղիազարյանը, Գեւորգ Խանգադյանը, Վասիլ Սիրգոյանը, Երվանդ Տեր-Ավետիսյանը, Աբաս Կուլի

Խան Երեւանսկին եւ Աբպար Աղա Իսմայլովը: Նախապես խմրի կազմում եղած երկու այլ աղբյուրներից հրաժարվում են մասնակցել:

Քաղաքային դուրան ձիաքարշի հարցը բաժանում է ջրմուղի հարցից եւ վերջինիս կառուցումը հանձնարարում է «Երեւանի ջրմուղի ընկերությանը»: Սա ուներ իր խորհուրդը, որի կազմի մեջ էր մտնում ինժեներ Վ. Սիրգոյանը: Իրականում Սիրգոյանն էլ ղեկավարում էր ջրմուղի շինարարությունը: 1911 թ. դեկտեմբերի 23-ին Քառասուն աղբյուրների ջուրը նորակառույց ջրմուղով հոսում է Երեւան: Այդ օրվանից քաղաքում սարքված ինը ծորակից հոսում էր Եվրոպայում երկրորդ տեղը գրավող մաքուր ու սառնորակ ջուրը: Պաշտոնական բացումը կատարվում է 1912 թ. հունվարի կեսերին: Ջրմուղը կառուցվել էր տեխնիկական բարձր մակարդակով, խողովակները անցկացվել էին մեծ խորությամբ, այնքան, որ ջրի ջերմաստիճանը 1-1,5 աստիճան էր բարձրանում: Դա երեւանցիների դարավոր երազանքն էր: Երեւանի ամենաթանկարժեք կառույցի՝ ջրմուղի վրա ծախսվել էր 285000 ռուբլի: Նախասովետական շրջանում այդքան մեծ արժողությամբ ոչինչ չի կառուցվել:

### **Հրազդանի կամուրջը**

Հրազդանի կամուրջը հին երեւանցիները կոչել են «Կարմիր կամուրջ» կամ «Խոջա-Փլավի կամուրջ»: Առաջին անվանումը կապված է կարմիր տուֆի հետ, որով կառուցված է այն, իսկ երկրորդը կապվում է քանաքեռցի մեծահարուստ Խոջա-Փլավի անվան հետ, որը վերանորոգել է այն: Ի դեպ, այդ մարդու անվան հետ է կապված նաեւ 15-րդ դարի Աշտարակի կամուրջը:

### **Գետառը**

Չնայած սակավաջրությանը, Գետառը կատաղի սելավներով է հայտնի: Նրա վրա կառուցվել են կամուրջներ տարբեր ժամանակներում: Սակայն ամենանշանավորը քաղաքը Ավանի եւ Նորքի հյուսիս-արեւմտյան մասի հետ կապող կամուրջն է, որը շատ ամուր շինություն է եւ դիմացել է անգամ 1679 թվականի զուլուն երկրաշարժին: Այն կառուցվել է 1664 թվին: Դեպքեր են պատահել, որ կամրջի աչքը փակել է հեղեղը, ջուրը բարձրացել, հոսել է կամրջի վրայով, բայց չի կարողացել քանդել: Սովետական տարիներին շաբաթօրյակների լավ ավանդույթ կար: Ուսանողներս մի անգամ քարերից մաքրեցինք Գետառի հունը եւ մեծ ոգեւորությամբ կառուցեցինք

Հաղթանակի զբոսայգին: Կարգավորեցինք Մեծ եղեռնի զոհերի հուշարձանը:

### **Երեւանի նշանավոր մի քանի վայրեր**

Քաղաքն ունեցել է իր միակ զբոսայգին, որը կոչվել է Անգլիական այգի կամ «Սոբաչի սադ»։ Կեղտի, ապականության բույն է եղել, մալարիայի, խոլերայի բույն: Իսահակ Մելիք-Աղամալյանի քաղաքագլխության տարիներին ընդամենը երեք հազար ծախսելով, որից երկու հազարը ծախսվել է անջրդիացման վրա, հնարավոր է դարձել հին ու փտած ծառերը կտրել, դրենաժ անել զանազան ուղղություններով, ճահճային ջրերն ի մի հավաքել, չորացնել, «Լեհաստանից ու Կրեմենչուգից չորս հազարի չափ նորատունկ ծառեր բերել տալ», այգում բաց անել նոր ծառուղիներ, սեփական կալվածքներից ծառեր բերել, տնկարան հիմնել եւ այլն: Այգու բարեկարգման աշխատանքները շարունակվում են Իսահակի եղբոր Իվ. Ղ. Մելիք-Աղամալյանի ջանքերով: (Տողերիս հեղինակը ճանաչում էր Աղամալյաններից մեկին, կարծեմ Սաշա Աղամալյանն էր: Բոլոր կոնդեցիներով հարգում էինք այդ բարի, ազնվական մարդուն: Նա հրաշալի տներ ուներ, այգիներ, ցեղական շներ եւ սքանչելի ձիեր):

Ավելի քան տասը տարի այգու դռները փակվում են քաղաքացիների առաջ, մինչեւ որ որոշ չափով կարգավորվում է. բացումը կատարվում է 1910 թ. հոկտեմբերի 3-ին:

\*\*\*

Քաղաքում հայտնի էր Կոնդի տարրական ուսումնարանը, որը հիշվում է 1902 թվ ալ անից:

\*\*\*

1902 թ. բացվում է առաջին քաղաքային գրադարանը, 1911 թ.՝ առաջին ակումբը:

Այլ մանրամասներ

Ութսունական թվականներին քաղաքային վարչությունը սանիտարական հանձնաժողովին տրամադրել էր երկու սայլ, որոնք օրերով չէին երեւում:

\*\*\*

Մինչեւ 1888 թ. չհաշված զինվորական միակ հիվանդանոցը, քաղաքում չկար բուժհիմնարկ, կային երեք մանր դեղատներ: Բուժումը փողով էր. բժշկական ամեն մի խորհրդի դիմաց 40 կ., իսկ աղքատների համար բուժումը ձրի էր: 20-րդ դարի սկզբում կրկնապատկվում է բուժաշխատողների թիվը. 20-25 հոգի:

\*\*\*

Գաղթականության համար իբրեւ առաջին ապաստարաններ ծառայել են Գայանյան ուսումնարանի եւ Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու

ծխական դպրոցը: Գայանյան հոգաբարձության նախագահի մի գրությունից իմանում ենք հետեւյալը. «Գայանյան օրիորդաց դպրոցը գաղթականության առաջին իսկ օրից ծառայել է փախստականների համար մերթ իբր ապաստարան, մերթ իբր որբանոց, մերթ իբր հիվանդանոց»: 20-րդ դարի առաջին տասնամյակում դպրոցի վեց սենյակներում ապաստանում էին փախստականներ, մեծ մասամբ հիվանդ եւ հաշմանդամ: Այդպես էր դրությունը նաեւ Կոնդի դպրոցում: Հոգաբարձության հաղորդման համաձայն 1914 թ. դեկտեմբերի վերջին այստեղ տեղավորվել են 500 գաղթականներ, որոնք որոշ ժամանակ մնալուց հետո, գնացել են տարբեր գյուղեր: 1915 թ. հոկտեմբերի սկզբներից այստեղ բնակվում են 200 փախստական աշակերտներ, որոնցից 150-ը մնում է այդտեղ ու սովորում ծխական դպրոցում, մինչեւ 1916 թ. գարնան վերջերը:

\*\*\*

Երեւանի առաջին թերթը «Պսակն» է, որը լույս է տեսել 1880 թ. ընդամենը չորս տարի: «Պսակը» լույս է տեսել շաբաթական մեկ-երկու անգամ, ունեցել դեմոկրատական ուղղվածություն, հակացարական, հակասուլթանական տրամադրությունները հատուկ էին նրան, ցարական գրաքննությունն ամեն անգամ շատ դժվարությամբ էր արտոնում թերթի լույսընծայումը: Ապրիլի 7-ին լույս է տեսել վերջին համարը

\*\*\*

1923 թվին երեւանում հավաքվել են եւ էջմիածնի մատենադարանին են հանձնվել ձեռագիր մատյաններ, որոնցից 25-ը պահվում էր Կաթուղիկեում, 20-ը՝ Պողոս-Պետրոս եկեղեցում, 73-ը Ս. Սարգիս եկեղեցում, 21-ը՝ Ս. Հովհաննեսում, 2-ը Ջորավորում, իսկ մնացած 3-ը՝ Նորքում: Դրանք եղել են ավետարաններ, աստվածաշունչ, ճաշոցներ, մաշտոցներ, նարեկ եւ այլն:

### **Վերջաբանի փոխարեն**

Երեւանի մասին գրվել են եւ դեռ կգրվեն բազում երգեր: Սակայն կա մի երգ, որ ինձ հանգիստ չի տալիս: Դա երգահան Ա. Մանդակունյանի սքանչելի երգն է.

Երեւան, Երեւան, իմ միակ օթեւան,  
Ես կանցնեմ, կգնամ,  
Դու ապրիր հավիտյան...

Վստահ եմ, որ այս տողերը հանգիստ չեն տալիս նաեւ երգի հեղինակ Մանդակունյանին, որը վաղուց երեւանում չէ...

ԱՆԺԻԿ ՀԱԿՈՒՅԱՆ